

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՄԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ՄՅՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

Ցանկանալով բավարարել յուրաքանչյուր պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամների՝ մյուս պետությունում վարձատրվող գործունեություն իրականացնելու իրավաչափ ցանկությունը,

Պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամները, ովքեր ունեն մյուս պետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված կացության հատուկ կարգավիճակ կամ դիվանագիտական քարտ, այսուհետ՝ «ընտանիքի անդամ», կարող են ստանալ ընդունող պետության տարածքում վարձատրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան և փոխադարձության հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 2

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակներով հետևյալ հասկացությունները նշանակում են՝

a) «Պաշտոնական առաքելություններ»՝ 1961թ. ապրիլի 18-ի Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի համաձայն դիվանագիտական ներկայացուցչությունները, 1963թ. ապրիլի 24-ի Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի համաձայն հյուպատոսական ներկայացուցչությունները, և պետություններից

յուրաքանչյուրի միջազգային կազմակերպություններին առընթեր մշտական ներկայացուցչությունները, որոնք նստավայր ունեն մյուս պետությունում:
b) «Ընտանիքի անդամ» այն անձը, ում որպես պաշտոնական առաքելության աշխատակցի ընտանիքի անդամի, համապատասխան արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվել է կացության հատուկ կարգավիճակ կամ դիվանագիտական քարտ՝ ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴԿԱԾ 3 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1. Ընդունող պետությունում ընտանիքի անդամի աշխատելը թույլատրելու նպատակով համապատասխան պաշտոնական առաքելությունը երկկողմ հարաբերությունների համար պատասխանատու դեսպանության միջոցով, իսկ միջազգային կազմակերպությունում պատվիրակությունների և մշտական ներկայացուցչությունների դեպքում՝ միջազգային կազմակերպության արարողակարգի միջոցով, ընդունող պետության արտաքին գործերի նախարարության արարողակարգի ծառայություն է ուղարկում շահառուի անունից վճարովի աշխատանք իրականացնելու թույլտվություն ստանալու դիմում: Դիմումը պարունակում է իրականացվելիք աշխատանքային գործունեության մասին մանրամասներ, ինչպես նաև դրան կցվում են դիմումի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթեր, մասնավորապես՝ կացության հատուկ կարգավիճակի կամ դիվանագիտական քարտի պատճենը, աշխատանքի ընդունման խոստումը, ապագա գործատուի տվյալները:

2. Իշխանությունների կողմից գործի ուսումնասիրման արդյունքում, պաշտոնական առաքելությունը դիվանագիտական ուղիներով իրազեկվում է ընտանիքի անդամին տվյալ գործունեությամբ զբաղվելու թույլտվություն տրամադրելու կամ մերժելու որոշման մասին:

3. Ընտանիքի անդամի վարձատրվող աշխատանքի թույլտվությունը չի հանգեցնում տվյալ աշխատանքի համար որպես կանոն կիրառվող բոլոր պահանջներից, ընթացակարգերից կամ պարտավորություններից ազատման՝ թե անձնական հատկանիշների, դիպլոմների կամ մասնագիտական որակավորման, թե այլ հարցերի առնչությամբ: Այն մասնագիտությունների դեպքում, որոնց համար թույլտվությունը կարող է տրվել միայն որոշակի չափանիշներով պայմանավորված, ընտանիքի անդամը չի ազատվում նշված չափանիշներին համապատասխան լինելու պահանջից:

ՀՈԴԿԱԾ 4 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄ

Վարձատրվող աշխատանք իրականացնելու թույլտվությունը դադարեցվում է, եթե՝

- a) շահառուն այլևս չի կարող հավակնել լինել ընտանիքի անդամ,
- b) վարձատրվող աշխատանքային գործունեությունն ավարտվում է,

c) ընդունող պետությունում ավարտվում է աշխատակցի գործառույթները, ում ուղեկցում է ընտանիքի անդամը:

ՀՈԴԿԱԾ 5 ՔԱՐԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարձատրվող աշխատանք իրականացնող ընտանիքի անդամը ենթարկվում է ընդունող պետության օրենքներին, առանց զրկվելու անձնական և բնակության վայրի անձեռնմխելիությունից՝ այս ոլորտում գործող դիվանագիտական սովորույթներին համապատասխան: Նա պահպանում է իր կացության հատուկ կարգավիճակը կամ իր դիվանագիտական քարտը:

2. Վարձատրվող աշխատանք իրականացնող ընտանիքի անդամը չի օգտվում քաղաքացիական և վարչական իրավազրության նկատմամբ անձեռնմխելիությունից, ոչ էլ աշխատանքային գործունեության հետ կապված դատական որոշման կատարման նկատմամբ անձեռնմխելիությունից, և այդ գործունեությանն առնչվող բոլոր հարցերով ենթարկվում է ընդունող պետության օրենսդրությանն ու դատական ատյաններին:

ՀՈԴԿԱԾ 6 ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Այն դեպքում, երբ վարձատրվող աշխատանք իրականացնող ընտանիքի անդամն իր մասնագիտական գործունեության շրջանակում կկատարի քրեական հանցագործություն, ընդունող պետության իշխանությունները կդիմեն գործուղող պետության իշխանություններին տվյալ անձին ընդունող պետության քրեական իրավազրության մասով անձեռնմխելիությունից զրկելու համար: Հատուկ հանգամանքներում, երբ գործուղող պետության իշխանությունները կհամարեն, որ նման անձեռնմխելիությունից զրկելը հակասում է իրենց շահերին, նրանք կարող են չհամաձայնել՝ ելնելով այն ըմբռնումից, որ քրեական իրավազրության նկատմամբ անձեռնմխելիությունից հրաժարումը չի կարող մեկնաբանվել որպես դատավճռի կատարման նկատմամբ անձեռնմխելիությունից հրաժարում, որի համար անհրաժեշտ է առանձին հրաժարում: Այս դեպքում, գործուղող պետությունն է գնահատում պետք է արդյո՞ք հրաժարվել այդ վերջին անձեռնմխելիությունից:

ՀՈԴԿԱԾ 7 ՀԱՐԿՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիաների դրույթներին կամ կիրառելի ցանկացած այլ միջազգային դրույթներին համապատասխան, վարձատրվող աշխատանք իրականացնող ընտանիքի անդամը պարտավոր է աշխատանքային գործունեության շրջանակում ստացված ցանկացած վարձատրությունից վճարել հարկեր և կատարել սոցիալական ապահովության վճարներ:

ՀՈՂՎԱԾ 8
ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման ընթացքում առաջացած տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ Կողմերի միջև ուղղակի խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 9
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի վերջին ծանուցումն ստանալու ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունը կամ լրացումն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի առաջին կետին համապատասխան:

3. Սույն Համաձայնագիրը գործում է անորոշ ժամկետով, մինչև որ Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր չժանուցի այն դադարեցնելու իր որոշման մասին: Դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալուց վեց (6) ամիս հետո:

Կատարված է Փարիզ քաղաքում 2017թ. դեկտեմբերի 22-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

Ֆրանսիայի Հանրապետության
Կառավարության կողմից՝

Էդվարդ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ժան-Մարկ ԷՅՐՈ

Արտաքին գործերի
նախարար

Արտաքին գործերի և միջազգային
զարգացման նախարար